

Աէրն 'ի սըրտին էր բարձրագահ ,  
 Եւ յոյս առօյդ փարատէր զահ .  
 Տեսեալընա՝ էրանեցին  
 Եւ երանէր անձամբ անձին :  
 Իրի արանց էր եւ երթայր ,  
 Եւ յերթն առնուլաշխարհ թընդայր .  
 Թթթեւ թըռչէր բաղդն իւր վառվառ ,  
 Կարապետեալ փառաց 'ի փառս ,  
 Եւ վարդագոյն ոլորտն հանդէպ  
 Այնէր , տեղի տայր Ճեպ ընդ Ճեպ .  
 Նքն ըզըրտին յիշելով սէր՝  
 Ը ողայր շարժէր ճակատ վըսէր .  
 Եւ ծածանեալ զիսակս ընդ ուս  
 Ժաթափելով բոց ընդ աշկունս ,  
 Իրը երիվար ուազմիկ փուրնչէր ,  
 Եւ խոյանայր եւ յառաջէր :  
 Իրի արանց էր եւ երթայր . . .  
 Եւ երթիցէ մինչեւ ցոր վայր : . . .

Դամմ' իջուցեալ զաքս 'ի գետին ,  
 Եւ զինչ 'ի տես գայր առ ոտին : . . .

Ինդէր պազի փաղփուն ճակատ ,  
 Ինդէր մածնուն վարսք ոսկեհատ . . .

Որպէս փայլակըն խաղաղի ,  
 Աէրն 'ի սըրտին մէջ նըւազի .  
 Յոյս վերջոտնեալ տասն ասպարէս ,  
 Եւ մոռանայ զընաւ զիւր հանդէս : . . .

Ի՞ս , անփախուստն հանուրց սահման՝  
 Լըմա 'նջըրպետ կայր՝ գերեզման : —  
 Իրի արանց էր՝ եւ չերթայր ,  
 Ասն 'ի յերեր սիրտըն թընդայր : . . .

Իրեւն 'ի մայրըն խորասոյզ ,  
 Ուսին ու աստեղք ամարոպայոյզ .  
 Խաւար խոնաւ տարածեալ շուրջ ,  
 Հողմըն ցըրտին , բընութիւն լուրջ .  
 Երկինք մածեալ իբրու քարայր ,  
 Եւ սօսափիւն մահու գոռայր : . . .

Ոոգւոց եհան , “ Ի՞ն յոյս , ո՞հ սէր , . . .  
 Ո ոչինչ զիտէր , ոչինչ լըսէր : . . .

Ո ազել զվըհիւն այն ոսն ամբարձ ,  
 Եւ վիշն անեզը էր եւ անդարձ . . .  
 Իրի արանցն այն՝ ոչ եւս էր . . .

Ի՞ս , ոչ եւս յոյս , ո՞հ , ոչ եւս սէր : . . .

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Շատ ևել մարդուն ծնկուրները քան զգրուիր  
 աւելի խոհեմ ու խելացի են :

Ի՞ՑՍ խօսքը մէկու մը բերնէն լսեցի ,  
 ու խնտալս եկաւ . և առջի բերան կատա-  
 կով զրուցուածք մը երեցաւ ինծի : Ո՞ր  
 կ'ըսէր թէ նոր ծնած տղու մը կը սկը-  
 սին մէկէն ծնկուրները խաղալ կայտոկլ ,  
 տարածիլ , կծկիլ , երկննալ , կարծիլ .  
 միով բանիւ հանդարտ չեն կենար : Ո՞ւ  
 երբոր խանձարուրը քակես , կը տեսնաս  
 որ ծնկուրները ոտքերով հանդերձ վեր  
 կ'ելլեն . և թէ որ սանկ բաւական ուժ  
 մ'ալ անոնց կարողութեանը միաբանե-  
 լու ըլլար , քայլելնին ալ կը տեսնայիր :  
 Հարկաւ տեսած ես հորթուկները ,  
 մորուկներն ու վառեակները են , որ դեռ  
 հազիւ ծնած՝ ոտքի վրայ կը կենան ու կը  
 վազվզեն : Ուերկնցնենք՝ վերջապէս կե-  
 նաց առջի պաշտօնը կը կատարեն . և թէ  
 որ լաւ քննես , կը տեսնաս որ քան զձեռ-  
 քը և քան զուրիշ անդամները մարդուս  
 աւելի հարկաւորներն ասոնք են : Ի՞եռ  
 շատ յատկուինին կը լսել . բայց ես  
 հոս իրենց մէկ յատկութեանը վրայ կը  
 կենամ , որն որ մեծ օգնութիւն կու տայ  
 մարդուս , թէ որ յանկարձ վտանգի մը  
 մէջ գտնուելու ըլլայ : Ի՞ւ ան ատեն յայտ-  
 նի կը տեսնաս որ ծնկուրները շատ ան-  
 գամ քան զզլուիր լաւ խելք կը բանե-  
 ցնեն եղեր : ( Խինակի համար . ըսենք  
 թէ մէկը ուրիշի մը դէմ ատելութիւն ու-  
 նենալով սկսի զանի անիծանելու յիշոց  
 տալ անոր , ու ան ալ առջինին . առ քեզի  
 աղէկ կուր մը : Ի՞այց թէ որ ասոնք ու-  
 զենային շիտակ խրատի մտիկ ընել , կը  
 տեսնէին , որ դեռ բարկութիւնը երկու  
 կողմանէ շաստկացած , շարունակ ծըն-  
 կուրնեթը կը սկսին վարէն ձայն տալ ի-  
 րենց ու խրատել , Մարդէկ , Ք ընէտ , Քէ  
 դէ նողուցէտ նշանաւիւնն ու հուտը . և  
 որովհետեւ ծնկուրները չունին կենդամնի  
 բարբառ , ուստի ազդրին տակէն կը սկսին  
 ուժով գողալ . թէ որ մտիկ ըրին անոնք

իրենց ազդարարուեցը, անվսաս խալսեւցան . իսկ թէ որ չէ, ալ իրարու աչքն ալ կը հանեն, զլուխնին ալ կը պատռեն, զիրար ալ կը սպանեն . վերջապէս ողջ ալ մնալու ըլլան, հանգիստ առած տեղերնին բանտ կ'ըլլայ . ինչպէս նման դիպուած մը պատահեցաւ անցեալները, որ հիմա հոս կը պատմենք :

Շուկայի մը մէջ առջի բերան երկու մրմնալու ձայն կը լսուեր, բայց ինչ պատճառէ առաջ գալը չէի գիտեր ու չէի հասկընար իրալու զրուցածնին, վասն զի կարծես թէ երկու ձայներն ալ հեռու անտառէ մը կու գային . բայց հետզհետէ անանկ բարձրացան այս ձայները, որ ալ սկսան բառերն ալիմաստներն ալ որոշ որոշ լսուիլ . վերջապէս իմացուեցաւ որ ասոնց մէկը պանդոկապետի միւսն ալ օտարականի մը ձայն էր : Պահն դոկապետը կ'ըսէր օտարականին . Լուքեզի կերակուր տուի ու զքեզ պահեցի պանդոկիս մէջ, արդարութիւնը կը պահանջէ որ դու ալ հատուցանես : ( ) տարականն ալ կ'ըսէր . Դիտեմ այս, իրաւունք ունիս դու, բայց եկուր նայէ որ ես ալ ստակ չունիմ, կը սպասեմ որ գայ : Դու ստըկի կը սպասես, բայց ես նայինք քեզի կուզեմսպասել, կ'ըսէ պանդոկապետը : Ի՞ն ատեն կը դառնայ օտարականը կ'ըսէ . Ի՞նա քեզ հրաման կու տամ, ինչ զրաւ որ կ'ուզես առ ինձմէ ու պահէ քովզ : Ի՞նայց ատ բանը իմազնուութեանս ձեռք չտար, կ'ըսէ պանդոկապետը :

Ի՞ս խօսքիս տաքնալով մը կ'ըսէ օտարականը . Ի՞նչ տեսակ ազնուութիէ որ այսպիսի փողոցի մը մէջ ետեէս ընկեր կը պոռաս ու կը կանչես, իրբեթէ խաթեբայ մը ըլլայի : Լամաց եկուր պարոն, ես խաթեբայ մաթեբայ չեմ գիտեր, օրէնքը այս է, պարտքդ է, պիտի վճարես : Ո՞չ մ' ալ ինչ տեսնես, առաջ որ սկսեր էին չէնքով չնորհքով Պիրարու հետ խօսիլ, երթալով անշնչնցաւ անշնորհքացաւ խօսքերնին ալ կերպարանքնին ալ . ու ալ սկսան իրարու դէմիրենց երկրին ցած ածականները գործածել զի մէկը վենետիկցիերէն կը խօսէր, մէ-

կալը թուքաներէն : Լու այն կամաց կամաց միմուալը, այն աստիճանի բարձրացաւ, որ առջի բերան մօտէն ըսողը, ետքէն սկսաւ հեռուէն տանիքներուն վրայէն աշտարակներէն լսել . և այն աստիճանի հասաւ կատաղութիւննին, որ եթէ ծնկուլները խոհեմութիւննը չունենային, անշուշտ իրարու արիւնը կը թափիէին : Ո՞չ մ' ալ ան կատաղուետեսէն օտարականը ( չեմ գիտեր թէ կը ձեւցընէր թէ իրաւցընէ ) ձեռքը ուժով մը գրապանը խոթեց, ու անանկ մը ցուցուց՝ որ կարծես թէ դանակ կը փընտուէր : Լոյս սպառնալոց շարժմունքէն պանդոկապետին ծնկուլները ալ աւելի սաստիկ սկսան դողալ . որ արդեօք քանի անգամ առաջ ալ դողալով խրատերէին զինքը, բայց այս վախնալու երեցը թիւն վրայ ծնկուլները ուժով մը ցընցելով զինքը, թեթև յարդի մը պէս բըռնեցին ամբողջ մարմնը հօնկէց անդին հրեցին, որ ալ աչքը դարձած չորս ոտքով սկսաւ փախչիլ, ու շտեսնալով դիմացը եղածը, գնաց կատաղաբար զարկաւ գլուխը հայելագործի մը խանութիւն ու մեծկակ հայելի մը վար ձգեց ջարդուբարդ ըրաւ : ( ) տարականը այս շըունը լսելով ծնկուլները դողալով ազգեցին իրեն որ հիմա հայելագործը քեզմէ պիտի ուղէ կոտրած հայելոյն զինք . աս վախէն մէկէն անցաւ կատաղութիւն ու սափորի մէջ կեցած եղի պէս պաղեցաւ մնաց, ու կամացուկ մը առաւ քալեց . պանդոկապետն ալ մէկալ կողմէն թողուց փախաւ :

Ի՞նա աս դէպքն որ լսեցի, ես ալ իրաւունք տուի ան մարդուն ըսածին, որ իրաւցընէ շատ անգամ զլսէն աւելի կը խորհին եղեր ծնկուլները :